ձեռքերը . . . նոյն ժամուն լուսեղէն կամար մը գա-
լով Ս. Կուսին վրայ և ամպեղէն լուսով մը խաչա-
նման կաթեց սուրբ պատկերին վրայ։ Ս. Կոյսը իր ե-
րեսին վրայ դնելով պատկերը արտասուեց։ Պետրոս
և Պօղոս առին պատկերը անոր ձեռքէն և ամէնքն ալ
երկրպագեցին անոր . . . ։

Բարդուղիմէոս առաքեալը՝ տասներկուքէն մին՝
Ս. Կուսին զուգահաւաքման ժամանակ չկար. Աստ-
ուած այսպէս կամեցեր էր, վասնզի Թովմասի հետ
Հնդկաստան գացած էր։ Յետոյ եկաւ առաքեալներուն
մօտ, և ստիպեց որ իրեն ցոյց տան Ս. Կուսին մար-
մինը։ Անոնք իրենց եղբօր փափաքը կատարերու հա-
մար բացին Ս. Գերեզմանը, բայց պարապ գտան զայն
աստուածակիր մարմինէն։ Հիացմամբ իմացան որ հը-
րեշտակներու օրհնութեան և սաղմոսերգութեանց դա-
դարելէն երեք օր վերջ փոխադրուեցաւ անոր սուրբ
մարմինը նոյն հրեղէն դասուն կողմէն, Բարդողիմէոս
մեծապէս սգաց որ Ս. Կուսին տեսութեան չի կրցաւ
ժամանել և չի լսեց անոր վերջին օրհնութիւնը, ինչ-
պէս Տէրոջը միւս աշակերտներն ու Առաքեալները և
գերեզմանին մէջ ալ չի գտնելով առաւել ևս տրտմե-
ցաւ։

Առաքեալներն այս պարագան տեսնելով ուզեցին
մխիթարել զանիկա, և այդ նպատակաւ անոր ընծա-
յեցին փայտին վրայ նկարեալ Տիրամօր պատկերը,
Բարդողիմէոս ընդունելով զայն մեծապէս ուրախա-
ցաւ և հրամանաւ Սուրբ Հոգւոյն քարոզութեան հա-
մար փութաց երթալ Հայոց աշխարհը, վասն զի Թա-
դէոս առաքեալ նահատակուած էր Արտազ գաւառի
մէջ։ Առաքեալը հաստատուեցաւ Անձեւացեաց աշ-
խարհին մէջ հեթանոսական պաշտամունքով նշանա-